Խորեն Աբրահամյան



ՀԽՍՀ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ:
Ծնվել է 1930թ. Երևանում:
Սովորել է Երևանի թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետում, որն ավարտել է 1951թ. և ընդունվել Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոն: Այստեղ էլ կերտել է բազմաթիվ դերեր (Ռոմեո, Պեպո, Օթելլո, Արա Գեղեցիկ և այլն):
1985-1988 թվականին աշխատել է Գյումրու Ա. Մռավյանի (ներկայումս՝ Վ. Աճեմյանի) անվան թատրոնում որպես գլխավոր ռեժիսոր:
1988 թվականից Սունդուկյանի անվան թատրոնի գլխավոր ռեժիսորն էր:
Խաղացել է 200 մեծ ու փոքր դերեր, բեմադրել է շուրջ 30 թատերգություն, նկարահանվել է 50-ից ավելի ֆիլմերում: Չորս անգամ նախկին ԽՄ փառատոներում ստացել է մրցանակ՝ տղամարդու լավագույն դերակատարման համար:
Աբրահամյանի դերակատարումներից են՝ Ռուստամ (Շիրվանզադեի «Նամուս», 1955), Ալեքսանդր (Փափազյանի «Ժայռ», 1957), Դրագադանօղլու (Յավորովի «Վիտոշի փեշերին», 1966) և այլն, կինոյում մարմնավորել է Արսենի («Առաջին սիրո երգը», 1958), Գևորգի («Սարոյան եղբայրներ»,1968, ՀՍՍՀ պետական մրցանակ), Պավլեի («Մենք ենք, մեր սարերը», 1969) և շատ այլ կերպարներ:
Մահացել է 2004թ.: